Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի տնօրեն,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ՝
Է. Հ. Օրդուխանյան

«26» 12 2024 թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Մուշեղ Ավետիքի Բաբայանի

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը (համեմատաիրավական վերլուծություն)» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ.

Առաջատար կազմակերպությանը ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հիմնախնդրի համալիր ու համակողմանի ուսումնասիրությանը:

Քննարկվող հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տեղեկատվական հասարակությունում ստեղծվել են այնպիսի տեխնիկական միջոցներ և հարմարանքներ, որոնք հնարավորություն են տալիս ներթափանցել մասնավոր կյանքի ոլորտ, միջամտել անհատի անձնական կյանքը և այլն, ինչը մարդու բնական և հիմնական իրավունքների կոպտագույն խախտում է: Բացի դրանից, անձնական տվյալների լայնորեն օգտագործումը մի կողմից՝ հնարավորություն է ստեղծում արդյունավետ, սոցիալական կառավորում իրականացնել, մյուս կողմից՝ նոր խնդիրներ են ստեղծում՝ տեղի տալով մասնավոր կյանքի անհարկի միջամտությանը:

Ինչպես իրավագիտորեն նշում է հեղինակը. քննակվող հիմնախնդրի հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն՝ յուրաքանչյուրի մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի պաշտպանության, այլև այդ պաշտպանության վիճակը բնութագրող Հայաստանի Հանրապետության ազգային և անհատի շահերի հավասարակշռման կարևորությամբ» (Ատենախոսություն, էջ 3)։

Քննարկվող հետազոտության թեմայի արդիականությունը բնութագրվում է նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության անձնական գաղտնիքների սահմանափակ հասանելիության կապն ուսումնասիրելու, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքները և դրա իրավական ռեժիմին բնորոշ հատկանիշները բացահայտելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ոչ միայն այդ իրավունքի իրավական բնույթն ու նշանակությունը, այլև նրա տեղն ու դերը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների համակարգում։

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի նպատակն է միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով և ներպետական օրենսդրությունում միջազգային իրավական չափորոշիչների ներմուծմամբ պայմանավորված՝ մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական օրինաչափությունների բացահայտումն է և դրանց ազդեցության տեսագործնական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդյունքում մարդու իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքների վերհանումը, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացմանն ուղղված իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ուղղությունների ու առկա կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը։ Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ բացահայտել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի էությունն ու բավանդակությունը, կատարել իրավահամեմատական վերլուծություն հիշյալ իրավունքի իրավակարգավորումների առանձնահատկությունները, առաջարկել նոր լուծումներ և իրավակարգավորումներ օրենսդրական մակարդակում և համանման այլ հարցադրումներ;

Աշխատանքի բովանդակության ուսումնասիրությունից կարելի է հետևություն անել, որ հեղինակը լիարժեքորեն է կատարել իր առջև դրված նպատակն ու խնդիրները. իսկ ստացված արդյունքները գիտականորեն հիմնավորված են և տրամաբանորեն փաստարկված. որոնք ունեն տեսական և գործնական զգալի նշանակություն:

Քննարկվող ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի էությունը և սահմանադրահիրավական բովանդակությունը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ որպես առանձին սահմանադրահիրավական ինստիտուտի ճանաչման, երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները՝ բացահայտելով այդ իրավունքի տեղն ու դերը մարդու սահմանադրական իրավունքների համակարգում. ինչպես նաև հետազոտել է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծագման և զարգացման պատմական հիմնական ուղենիշները. առաջադրել այդ իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների հիմնախնդիրների լուծման գործառնական նշանակությունը:

Համալիր ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի տեսական եզրահանգումներ. այլ նաև ներկայացվել են ՀՀ գործող օրենսդրական ակտերի կատարելագործմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ. սահմանվել են նոր հասկացություններ. առաջադրվել են գիտականորեն հիմնավորված կոնկրետ մոտեցումներ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ոլորտում:

Աշխատանքում տեսականորեն հիմնավորվել է հեղինակային այն դիրքորոշումը. համաձայն որի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ որպես բնական և անօտարելի իրավունք. անհրաժեշտ է ընկալել որպես սահմանադրությամբ նախատեսված և պաշտպանվող մարդու ու քաղաքացու հնարավոր վարքագծի տեսակ ու միջոց՝ սեփական կյանքի բնույթի ընտրության և հաղորդակցության ազատության. ինչպես նաև ինքնորոշման ու անկախության շրջանակում որոշելու իր մասնավոր կյանքի. այդ թվում՝ մասնավոր իրավական և

իրավական կարգավորում չենթադրող հարաբերություններում հարցերը ինքնուրույն լուծելու նպատակով:

Աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրավակարգավորումների ոլորտում հեղինակը մշակել է նոր գիտական առաջարկություններ և դիտարկումներ, որոնք հիմնված են եղել ոլորտի տեսական և գործնական բազայի ուսումնասիրության վրա:

Բոլոր առաջարկներն ու դիտարկումները ձևավորվել են ատենախոսության հետազոտության հիման վրա, ինչը կարելի է համարել սահմանադրական իրավունքի տեսության մեջ որոշակի ներդրում: Դրանք կարող են հիմք հանդիսանալ ինչպես ոլորտի սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման, այնպես էլ՝ հետագա տեսական հետազոտությունների համար: Առաջարկների, դիտարկումների հետևությունների արժանահավատությունը տեսականորեն հիմնավորված է հետազոտության ընթացքում օգտագործված գիտական մեթոդաբանությամբ, գիտական և նորմատիվային աղբյուրների լայն շրջանակով. իսկ գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել են այնպիսի առաջարկներ և դիտարկումներ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման ընթացքում:

Հեղինակի կողմից մշակվել են հստակ առաջարկներ, որոնք միտված են լուծելու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրագործման և դրա պաշտպանության ընթացքում առաջացած խնդիրները, մասնավորապես՝ ոլորտին առնչվող իրավական ակտերի ու համապատասխան դրույթների կատարելագործման իմաստով:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, աշխատանքում գիտական նորույթը ներկայացված է առավել ընդհանրական գծերով, մինչդեռ ախատանքի բովանդակությունը պարունակում է կոնկրետ տեսական և գործնական բնույթի հետաքրքիր դրույթներ և

առաջարկություններ, որոնք արժանի էին ամրագրել որպես գիտականորեն հիմնավորված հայեցակարգային մոտեցումներ:

Երկրորդ, սահմանադրական փոփոխությունների կամ նոր սահմանադրության ընդունման գործընթացների համատեքստում, տեղին էր մշակել սահմանադրական (կամ օրենսդրական) կոնկրետ առաջարկություններ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նոր իրավակարգավորումների վերաբերյալ, որոնք գործնական տեսանկյունից առավել օգտակար կլինեին:

Սակայն վերոնշված նկատառումները, ըստ էության, կրում են ցանկությունների բնույթ և բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Հեղինակի կողմից ընտրած մասնագիտական թվանիշը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը:

Աշխատանքի բովանդակությունը լիարժեքորեն են արտացոլված հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Գրախոսվող աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլագիայի և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական հետազոտությունների բաժնի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում, որում ներկա էին՝ Պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատող իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ.Ա.Ղազանչյանը, ավագ գիտաշխատող, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Վ.Շուքուրյանը, կրտսեր գիտաշխատող՝ Վ.Խ. Հովսեփյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ Մուշեղ Ավետիքի Բաբայանի «Մասնավոր կյանքի անձեռնմխելության իրավունքը (համեմատաիրավական վերլուծություն)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն և ամբողջական

հետազոտություն է, լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցող՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի Պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Հովհաննես Միքայելի Ստեփանյան

Պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու՝ Հ. Վ. Նազարյան